ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հոկտեմբերի 2022 թվականի №---Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ 42/2 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի սեպտեմբերի 27-ի №Ե-903-22 գրությունը, որով Ընկերությունը, ելնելով Երևան քաղաքի Հայրիկ Մուրադյան 42/2 հասցեի բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ Շենք) կառուցապատողի բացակայության փաստից, խնդրել է թույլատրել Շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնել Շենքի բնակիչների կողմից լիազորված անձ Վարդան Գյուլամիրյանի (այսուհետ՝ Լիազորված անձ) դիմումի հիման վրա՝ վերջինիս հետ կնքելով Շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագիր,

բ) Լիազորված անձի հոկտեմբերի 19-ի և Ընկերության 2022 թվականի հոկտեմբերի 24-ի №Ե-1012-22 գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Շենքի սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 156-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) Շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու նպատակով Կանոնների 159-րդ կետով սահմանված դիմում ներկայացնում, էլեկտրական ցանցին միացման պայմանագիր Ընկերության հետ կնքում և միացման վճար վճարում է Լիազորված անձը.
2) Շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու վճարը հաշվարկվում է համաձայն Կանոնների.
3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված միացման վճարի վճարման օրվանից մինչև Շենքը փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 290 օրը.
4) չի թույլատրվում Լիազորված անձից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրելու հատուցում, ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ պայմանագրով:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը չի սահմանափակում Շենքի բնակիչների իրավունքը՝ վճարված միացման վճարը օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջելու կառուցապատողից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիազորված անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
հոկտեմբերի 2022թ.